

ԿԱՐԻՆԵ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Ս Ի Ր Ո Կ Ա Ն Չ Ը

Երկրորդ խմբագրում
Նոր ձևավորում



Գ Ի Տ Ա Ն Ք
Երևան 2018

Կարինե Աղաբեկյանը առաջին հայ սիրավեպե-
րի հեղինակն է, որոնք լույս են տեսել 1999-
2013թթ: Նրա գրչին են պատկանում «Սիրո հա-
սունացումը», «Սիրո վերադարձը», «Կնոջ մե-
նամարտը», «Սիրո կանչը», «Ջգացմունքների
ներդաշնակություն», «Սեր և արժանապատվու-
թյուն», «Կգան բազում արշալույսներ», «Սիրո
ուսուցիչը», «Սիրո ծուղակ», «Շանթի սանձա-
հարումը», «Սիրո հրդեհ», «Սիրուց չես փախ-
չի», «Ձեռնաշղթաներ Մոխրոտի համար» վի-
պակները, որոնք մեծ հետաքրքրություն առա-
ջացրին ընթերցողների շրջանում և լայն արձա-
գանք ունեցան մամուլում:

Աղաբեկյան, Կ

Սիրո կանչը: - Եր.: Գիտանք, 2018 - 108 էջ.

Քսանհինգ օրվա բուռն իրադարձությունները
ամբողջովին հեղաշրջեցին Նունեի կյանքը:
Հարսանիքի նախօրյակին հայտնաբերելով իր
փեսացուի դավաճանությունը՝ աղջիկը հրա-
ժարվեց ամուսնանալ նրա հետ: Այդ որոշումը
խիստ բարկացրեց նրա հորը, և բռնի ամուս-
նությունից խուսափելու համար Նունեն ստիպ-
ված էր լքել երկիրը: Բայց կարճ ժամանակ
անց նա փեսացուին երախտապարտ էր դավա-
ճանության համար, քանի որ հասկացավ, որ
նրան երբեք չի սիրել, որ ճակատագրով իր
համար նախանշված է մի ուրիշը...

ISBN 978-9993-080-65-7

© Կարինե Աղաբեկյան, 2000

Կազմի ձևավորումը՝ Ա. Աղաբեկյանի

Այս գրքի բոլոր հերոսներն ու իրադարձություն-
ները հորինված են, ամեն համընկնում պատա-
հականություն է:

ՆԱԽԱԲԱՆ

Շարժիչների աղմուկն աստիճանաբար սաստկացավ, օդանավը ցնցվեց, թափ առավ և առաջ սլացավ թռիչքուղիով:

Վերջապե՛ս: Նունեն թեթևացած հոգոց արձակեց, երբ օդանավը, գետնից սրընթաց պոկվելով, հայտնվեց ամառվա հրակեզ արևի ճառագայթներով ողողված անծայրածիր երկնքում: Չափս կողմից, թափանցիկ ու շողուն մշուշուն լողուն էր վսեմափայլ Արարատի ձյունածածկ գագաթը: Ուղևորները աշխուժացան և հետաքրքրությամբ դուրս նայելով՝ բացականչեցին.

- Տեսե՛ք, տեսե՛ք, Արարատն է, ի՞նչ գեղեցիկ է...

Խիտ թարթիչների միջով Նունեն մտացիր հայացք գցեց լուսամուտից դուրս և հետ ընկավ թիկնակին: Նա այն հոգեվիճակում չէր, որ հիանար բնապատկերով: Սրտամաշ տազնապը չէր անցնում, իսկ գլխում տակավին հնչում էին լացակունած մոր բառերը:

Կլոր լուսամուտից թափանցած պայծառ լույսը ցոլքեր բռնկեց աղջկա սևաթույր, ատլասափայլ վարսերին, որոնք ծանր ու հարթ ալիքով իջնում էին մինչև գոտկատեղը: Նրա մատները, որ մինչ այդ ջղածգորեն կառչած էին արմնկակալներին, ինքնաբերաբար բացվեցին: Ճիշտ է, վերջին օրերի լարվածությունը կարծես թե թուլացավ, բայց նա այնուամենայնիվ չէր կարողանում ազատվել տազնապալից մտքերից՝ ի՞նչ է արդյոք իրեն սպասում: Մի՞թե ուրիշ ելք չկար...

Նունեն ականա հառաչեց, և կողքին նստած սևահեր տղամարդը, հայացքը կտրելով ծնկներին դրված համակարգչից, հոգատարությամբ դարձավ նրան.

- Նունե՛, ամեն ինչ կարգի՞ն է:

- Մի՛ անհանգստացիր, ես լավ եմ, - արտաբերեց դողդոջուն շուրթերով, ինքն էլ չհասկանալով՝ նրա՞ն է համոզում, թե՞ իրեն:

Ախր ո՞նց կարող եմ լավ լինել: Խիտ թարթիչներով երիզված նշաձև սև աչքերը, որ սովորաբար կայծկլտում էին կենսախիճն փայլով, լցվեցին արտասուքով: Նունեն սրբեց աչքերը և նորից տրվեց դառը մտքերին, մինչ օդանավը, միալար դռնալով, նրան անդամնալիորեն տանում էր հեռավոր անհայտություն...

ԳԼՈՒԽ 1

Ինչո՞ւ չեն մտածել մուտքի լուսավորության մասին, դժգոհ մտածեց Նունեն: Խավարում խարխափելով՝ մոտեցավ բնակարանի դռանը, շոշափելով գտավ բանալու անցքը և երկրորդ փորձից կարողացավ դուռը բացել: Թարմ ներկի սուր հոտն իսկույն պարուրեց աղջկան: Նա ներս մտավ և նախ վառեց նախասենյակի լույսը, ապա քայլերն ինքնըստինքյան ուղղվեցին հյուրասենյակ: Նունեն չկարողացավ հաղթահարել շքեղ սենյակով նորից հիանալու ցանկությունը և զմայլված հայացքով ընդգրկեց ճենապակյա փխրուն ամանեղենով լի սպասքապահարանը, նրբաճաշակ կահույքի ոսկեգույն թավշյա պատառը, նույն գույնի թավշյա վարագույրները, որ փղոսկրագույն պատի երկայնքով փափուկ ու խոր ծալքերով իջնում էին մինչև հատակը ծածկող նախշագարդ, դարչնագույն փափուկ գորգը:

Այո՛, հայրիկն իր խոսքի տերն էր, նրա նվիրած բնակարանը լրիվ պատրաստ էր հաջորդ օրն ընդունել նորապսակներին: Մի՞թե ինքն է այս գեղեցիկ բնակարանի տիրուհին...

Անուրջներից մշուշված աչքերով Նունեն նայում էր մեծ ճաշասեղանին և մտովի փոխադրվելով ապագա՝ պատկերացնում այդ սեղանի շուրջը հավաքված իրենց երջանիկ ընտանիքը, լսում իր երեխաների ուրախ ծվվուցը...

Երազկոտ ժպիտը լուսավորել էր երիտասարդ աղջկա չքնաղ դեմքը: Մի պահ անշարժ կանգնած՝ նա տրվել էր իրեն տոգորող զգացմունքներին և հանկարծ սթափվեց:

Արդեն ժամը ինն է: Մոռացե՞լ ես՝ ինչի համար ես եկել: Նա բացեց ձեռնապայուսակն ու սկսեց փնտրել: Ո՞ւր է սրբապատկերը... Ահա՛, գտա: Այժմ մնում է դնել ներքնակի տակ: Եթե տատիկն ասում է, ուրեմն մի բան գիտի: Տա՛ Աստված...

Աղջիկը խորին հավատով խաչակնքվեց և գեղեցիկ սենյակին ևս մի հայացք նետելուց հետո ավստսանքով դուրս եկավ:

Վաղը, հուսադրեց իրեն: Խոստումնալից ժպիտը ծաղկեց նրա շուրթերին, աչքերը խորհրդավոր փայլեցին: Վաղը, մնացել է համբերել լուկ մեկ գիշեր:

Նունեն սրտատրոփ մոտեցավ ննջարանին և արդեն ուզում էր դուռը բացել, սակայն այնտեղից լսվող տարօրինակ ձայները նրան ստիպեցին կանգ առնել:

Ի՞նչ կարող է լինել, տարակուսեց նա:

Ականջը զգույշ հպեց ննջասենյակի դռանը, իսկ ձեռքն անշարժացավ բռնակին. համաչափ ճռճոցի հետ միաժամանակ լսվում էին ինչ-որ հևսպառ տնքոցներ, անպարզ մրմնջոցներ...

Սեփական սրտի զարկերը գրեթե խլացնում էին դռան հետևից լսվող աղմուկը: Նունեն վերջապես համարձակվեց և կտրուկ շարժումով բաց արեց դուռը: Արյունը սառեց նրա երակներում: Ո՛չ, Տե՛ր Աստված, ո՛չ, չի կարող պատահել... Այս կարճատև, բայց սոսկալի պահին մեկեն խորտակվեցին երջանիկ ապագայի բոլոր հույսերը: Նա նայում էր ու չէր ուզում հավատալ իր աչքին:

Իր օժիտի լայնարձակ, կարելի է ասել՝ ապագա ամուսնական մահճակալին թավալ եկող մերկ զույգն այնքան տարված էր իր վայելքներով, որ սկզբում չնկատեց Նունեին: Այնուհետև կնոջ երկնագույն աչքերը չովեցին ու սարսափահար գամվեցին Նունեի այլայլված դեմքին, և նա, տղամարդուն իր վրայից մի կողմ հրելով, հազիվ կարողացավ ծղրտալ.

- Գագո՛...

- Քեզ ի՞նչ եղավ, Լինա, - փնջացնելով մռթմռթաց Նունեի ապագա ամուսինը:

Նունեն տեղում քարացել էր. ոտքերին ասես փթանոց կշռաքարեր էին կախել: Նկատելով սիրուհու սոսկումնալի, ակնապիշ հայացքը, որ ուղղված էր դռանը, Գագիկը շրջվեց, և նրա՝ ցանկասիրությունից մշուշված աչքերը, հանդիպելով իր հարսնացուի՝ տանջալի ցավով լեցուն հայացքին, ապակիացան:

- Ինչո՞ւ... – կերկերուն ձայնով շշմռաց Նունեն. նա ողջ մարմնով ցնցվում էր: - Ինչո՞ւ... ո՞նց կարող էիր...

Դառնագին հեծկլտալով՝ աղջիկը դուրս նետվեց, իսկ Գագիկը, վեր ցատկելով, սավանով մի կերպ քողարկեց իր մերկությունը և գլուխը կորցրած, սավանի մեջ խճճվելով, վազեց նրա հետևից:

- Նունե՛, Նունե՛, աղաչո՞ւմ եմ, սպասի՛ր... - կանչում էր խելակորույս, սակայն նա իր խաղն արդեն տանուլ էր տվել:

Արցունքների միջով աղջիկը ոչինչ չէր տեսնում: Նա հազիվ գտավ բռնակը, դուռը բացեց և աստիճաններով վար սլացավ: Նունեն լսում էր Գագիկի գոռգոռոցները, սակայն դրանք իր համար այլևս ոչ մի նշանակություն չունեին, ինչպես և այլևս գոյություն չունեին ինքը՝ դավաճան փեսացուն:

Նունեն դուրս վազեց փողոց և հեկեկալով աննպատակ առաջ սլացավ՝ չնկատելով անցորդների հետաքրքրասեր հայացքները: Աչքի առաջ քիչ առաջ տեսած զազրելի տեսարանն էր, իսկ գլխում միևնույն միտքն էր անդադար հնչում.

Տե՛ր Աստված, ինչո՞ւ... Ո՞նց կարող էր... Ո՞նց կարող էր տղամարդը, որ օրն ամենաքիչը երկու անգամ հավատացնում էր, թե սիրում է, այդքան ստորաբար վարվել:

Դա վեր էր նրա ըմբռնողությունից:

Նունեն չէր հասկանում, թե ուր է փախչում և ինչու... Հեկեկանքից ու վազքից արդեն շնչահեղձ էր, և երբ վերջապես կանգ առավ, հանկարծ մի միտք խուճապահար արեց նրան.

Հապա ե՞ս... հիմա ի՞նչ պետք է անեն... Տե՛ր Աստված, հիմա ո՞ր գնամ, տո՞ւն...

Նունեն սարսռաց՝ գիտակցելով այս խայտառակ իրադարձության աղետալի հետևանքները: Մոռացավ, որ իր մաքուր սերը ոտնահարված է, երջանիկ ապագայի հույսերը՝ խորտակված. տագնապով համակված՝ լոկ մտածում էր հոր արձագանքի մասին: Փորձելով իրեն տիրապետել՝ նա խոր շունչ առավ ու սրբեց արցունքները:

Աղջկա մշուշված հայացքը, սահելով գովազդի գույնզգույն, փայլատակող լույսերի վրայով, փողոցի հանդիպակաց կողմում նշմարեց ծանոթ շենքի ուրվապատկերը: Նա զարմանքով հայտնաբերեց, որ իր գրասենյակի մոտակայքում է:

Ահա՛, թե ուր կգնամ, որոշեց՝ քայլերն ուղղելով տուֆակերտ շենքի կողմը: Ես անպայման պետք է հանգամանորեն մտածեմ, թե ինչ եմ անելու: Ավա՛ղ, տանը դա հազիվ թե հնարավոր լինի.

Աղջկա սիրուն դեմքն այլայլվեց դառը քմծիծաղից: Նա սարսափով պատկերացրեց հոր ցատկուն այն պահին, երբ նա կիմանա, որ միակ դուստրը հարսանիքից մի քանի ժամ առաջ հանդգնել է մերժել նրա ընտրած փեսացուին:

Նունեն, ցավոք, լավ էր ճանաչում իր հորը: Գարեգին Սերոբյանին չէր հետաքրքրի, թե դատերը ինչը ստիպեց դիմել այդ բախտորոշ քայլին, ոչ էլ կհետաքրքրեին նրա ապրումները Գագիկի դավաճանության պատճառով. հոր կարծիքով՝ տղամարդու անհավատարմությունն առանձնապես մի մեծ զանցանք չէր:

Լավ, բավական է, ենթադրություններ անելու ժամանակը չէ, իրեն հորդորեց աղջիկը: Նախ և առաջ պետք է... Ո՛ւֆ, այս բանալին ո՞ւր է կորել:

Նունեն, որ արդեն տեղ էր հասել և գրասենյակի դռան առջև կանգնած, շուրթերը ջղային կծոտելով, բանալին էր փնտրում պայուսակում, ի վերջո գտավ, դուռը ինքնաբերաբար բաց արեց, լույսը վառեց և ուժասպառ փուլ եկավ մոտակա բազկաթոռին: Ինքն էլ չէր գիտակցում, որ նյարդային ցնցման վիճակում է: Նա տարօրինակ զգացում ուներ՝ կարծես թե իր ներսում միաժամանակ երկու հոգի կար. նրանցից մեկն այնքան էր տառա-

պում, որ նույնիսկ ի վիճակի չէր մտքերն ամփոփել, իսկ երկրորդը, կողքից սառնասրտորեն դիտելով, համբերատար սպասում էր, թե մյուսն ինչ կձեռնարկի:

Ա՛խ, Գագիկ, ո՞նց կարող էիր... կրկնում էր անընդհատ: Նա այրվում էր իրեն հասցված խոր վիրավորանքից: Դա՞ է քո սերը, հա՞, ստոր, երեսպա՛շտ: Գուցե ողջ ժամանակի ընթացքում, որ նշանված էինք, հանդիպո՞ւմ էր դրա հետ... Յետո էլ չէր ամաչում իր պիղծ բերանով ինձ համբուրե՛լ, սիրո խոսքե՛ր շռայլել... Տականք: Այդ ամենը սոսկ խաբեություն էր: Յիմա չեմ զարմանում, թե նրա համբույրներն ինչու էին ինձ անտարբեր թողնում, երևի բնագդաբար զգում էի, որ կեղծ են... Փա՛ռք Աստծո, լավ է ժամանակին հայտնաբերեցի: Այդ միտքը կարծես փոքր-ինչ մխիթարեց նրան: Չկա չարիք առանց բարիքի: Իսկ եթե վաղը հիմարաբար ամուսնանայի՞... Նունեն կրկին բորբոքվեց. Բայց ի՞նչ լկտի ու ստոր պիտի լինել, որ առանց խղճի խայթ զգալու, հարսանիքից մեկ օր առաջ շնանալ այն անկողնում, որտեղ ես կուսությունս էի նվիրելու այդ անարժանին: Եվ այն էլ ո՞ւմ հետ... Լինայի... Իր մտերիմ ընկերոջ ու գործընկերոջ կնոջ հետ: Յապա այդ անառակ Լի՞նան... Դրա՛ն տեսե՛ք: Իրոք որ այդ երկու դավաճաններն արժեն միմյանց... Խե՛ղճ Վազգեն, մի տարի էլ չկա, ինչ ամուսնացել են: Յայրս էլ գլուխս է գովում, թե ճանաչում է մարդկանց:

Աղջկա փքուն շուրթերը ծամածռվեցին արհամարհական քնծիծաղից: *Բա չէ՛ մի, մեկ էլ Գագիկին է ճանաչում: Լա՛վ օգնական է ընտրել. ա՛յ, երբ մի օր էլ նրան դավաճանի...*

Նունեի հայրը՝ Գարեգին Սերոբյանը, իր ողջ կյանքի ընթացքում աշխատել էր մատակարարման ոլորտում: Սովետական Միության փլուզումից և աղետալի երկրաշարժից հետո, երբ շատերի համար սկսվեցին ցուրտ, մութ ու սոված՝ անցման տարիները, Գարեգինն իրեն չկորցրեց և կուտակված միջոցների, սեփական ճարպկության, բազմաթիվ օգտակար կապերի և իր հարուստ

կենսափորձի շնորհիվ կարողացավ բավական արագ կողմնորոշվել: Այժմ նրա գործը բարգավաճում էր: Գարեգինը Հայաստանի համար կարևոր մի նյութի առքուվաճառքը տնօրինողներից մեկն էր: Սակայն այդ հզորագոր, ինքնավստահ մարդը սոսկ մի բանում հաջողություն չունեցավ. նա չուներ որդի, որը կանգներ հոր թիկունքին և շարունակեր նրա գործը:

Նունեի մայրը՝ Հեղինեն, դժվար ծննդաբերության պատճառով քիչ մնաց մահանար, և բժիշկները նրան կտրականապես արգելեցին մտածել նոր հղիության մասին: Իսկ Գարեգինն այդպես էլ չներեց կնոջը: Հեղինեն, որ իրեն որպես կին թերաբեք էր զգում, ամփոփվեց իր մեջ՝ թուլակամորեն ենթարկվելով տիրատենչ ամուսնուն: Այդ գեղեցիկ կինը, որ այժմ էլ բավականին հմայիչ էր, հանուն իր ընտանիքի լուռ ու մունջ տանում էր ամուսնու քամահրական վերաբերմունքը և բացահայտ անհավատարմությունը:

Հեղինեն իր սեփական տանն իրավունքներ չուներ, ապրում էր ոսկե վանդակում և ասես թանկարժեք մի իր լիներ, որի մասին հիշում էին միայն անհրաժեշտության դեպքում: Տանը տեղի ունեցող խրախճանքների ժամանակ տիկին Հեղինեն հյուրընկալ տանտիրուհի էր, բոլորի նախանձի առարկան և սեղանի ամենաջքեղ զարդը, սակայն նա, առանց մի պահ տարակուսելու, այդ ամենը կտար ամուսնու ջերմ ու փաղաքշական գեթ մի հայացքի համար:

Գարեգինին լոկ մի անձ էր հետաքրքրում՝ ինքը: Նա ընտանեկան տիեզերքի կենտրոնն էր: Այդպես եղել էր և այդպես պետք է լիներ: Գարեգինը համարում էր, որ իր ընտանիքի անդամներին միանգամայն բավարար է, որ իրենք պճնված ու կուշտ լինեն: Նրան չէին հետաքրքրում ո՛չ աղջկա ձգտումները, ո՛չ երագանքները և ո՛չ էլ հաջողությունները: Գարեգին Սերոբյանի ուշադրության ու պարծանքի առարկան լոկ ինքն էր, իր գործն ու սեփական փառքը: Նունեն հորը միաժամանակ և՛ սիրում էր, և՛ ատում: Մոր հանդեպ ևս երկակի

զգացմունք էր տածում. նրա պահվածքը խիստ զայրացնում էր աղջկան, որը ժառանգել էր հոր ուժեղ, հաստատակամ խառնվածքը, մյուս կողմից էլ խղճում էր համբերատար ու անմռունչ մորը, որին, ցավոք, չէր կարող օգնել:

Դեռ վաղ պատանեկությունից, երբ մոր էր սկսել գիտակցել, որ իր գեղեցկուհի մայրիկը տառապում է սեփական անհարկավորությունից, Նունեն փորձում էր ամեն կերպ նրան համոզել, որ սովորի պաշտպանել իր իրավունքները: Սակայն մայրը չէր ընդունում դատեր խորհուրդները՝ համառությամբ կրկնելով, թե ինքը չի արդարացրել ամուսնու հույսերը: Նունեն զգում էր, որ մոր հոգեկան ուժերը բոլորովին սպառված են: Իր բախտը Յեղիմեն ինքն էր որոշել և ապրում էր լոկ առօրյա հոգսերով: Օրեցօր դիտելով նրա տրտում կյանքը՝ աղջիկն իրեն խոստում տվեց, որ բնավ երբեք չի կրկնի մոր սխալը: Եվ ահա կես տարի առաջ ի հայտ բերելով երիտասարդ աղջկա համար զարմանալի ոգու կորով՝ նա առաջին անգամ հանդգնեց ընդդիմանալ տիրական հորը:

Օտար լեզուների ինստիտուտն ավարտելուց հետո Նունեն ակամայից ենթարկվեց հարազատների հորդորներին՝ *բալա՛ ջան, ուսումիցդ հոգնած կլինես, մի քիչ հանգստացի՛ր*, և մի քանի ամիս տանն անցկացրեց՝ զբաղվելով զուտ կանացի գործերով: Սակայն շուտով այդ տաղտկալի հանգստից պատրաստ էր ոռնալ և ինքնագլուխ, առանց որևէ մեկին հայտնելու, փայլուն կերպով անցնելով բոլոր հարցազրույցները, յոթ ամիս առաջ աշխատանքի ընդունվեց Կիպրոսում գտնվող առևտրի ընկերության Երևանի ներկայացուցչություն՝ դառնալով ընկերության տիրոջ ու նախագահի՝ կիպրացի հայ Նարեկ Շամասյանի օգնականը:

Մի շաբաթ տևող թեժ վեճերը և զայրացած հոր արգելքները չվախեցրին ըմբոստ դատերը: Նա չնահանջեց և վերջիվերջո պաշտպանեց սեփական որոշումներ կայացնելու իր իրավունքը: Բայց Նունեն լոկ հիմա գիտակցեց, թե որքան չարաչար